2020

«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՑԱՆՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ

ՀՖԿՍՊԻ-ՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌՑԱՆՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

27.05.2020

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաձայն նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի պատճառով Արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ Կառավարության մարտի 16-ի որոշման՝ հիվանդության տարածումը կանխելու նպատակով հանրապետությունում փակվեցին բոլոր կրթական հաստատությունները և արագորեն անցում կատարվեց **ա**ռցանց և հեռավար ուսուցմանը:

Մարտի 23-ին Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտը հայտարարեց առցանց դասավանդման անցնելու մասին՝ օգտագործելով տեղեկատվական և հեռահաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաները և ուսումնական հարթակները:

Բուհում իրականացվող հեռավար ուսուցման կազմակերպման հնարավորությունները, առցանց կրթության արդյունավետությունն ու արձանագրված խնդիրները ուսումնասիրելու, լուծումներ մշակելու և ներդնելու նպատակով ՀՖԿՍՊԻ-ի Որակի ապահովման բաժինը հեռավար ուսուցման անցնելուց մեկ ամիս անց իրականացրել է ուսանողական առցանց հարցում՝ բուհի երկու ֆակուլտետի 1-ից 4–րդ կուրսերի շրջանում: Հարցմանը մասնակցել է 196 ուսանող, առցանց հարցմանը հատկացվել է երկու շաբաթ:

Հարցման հիմնական նպատակներն են՝

Մինչ նպատակներին անդրադառնալը նշենք, որ հեռավար ուսուցման արդյունավետությունը չափելու համար ուսումնասիրվել և կիրառվել է հեռավար ուսուցման որակի ապահովման և կառավարման (LMS-Learning management system)[1] գործիքակազմը, որը կոչված է հաղորդակցության միջոցների, դասավանդման և ուսումնառության նյութերի բովանդակային վերափոխումների, վերապլանավորումների համար համակարգված ու ճկուն լուծումներ գտնել, քանի որ ցանկացած ներդրված տեխնոլոգիա և մեխանիզմ կառուցվում է բովանդակության շուրջ:

Առցանց հարցման նպատակն է ՀՖԿՍՊԻ-ում մեկ ամսվա ընթացքում իրականացված հեռավար ուսուցման հիմնական քանակական և որակական տվյալների համադրմամբ ներկայացնել առցանց պայմաններում դասավանդման և ուսումնառության գործընթացը, հավաքագրել տվյալներ առցանց ուսուցման պրոցեսում կիրառված դասավանդման այլընտրանքային, նոր մոտեցումների ու

[1] https://www.chronicle.com/interactives/advice-online-teaching, https://elearningindustry.com/what-is-an-lms-learning-management-system-basic-functions-features

մեթոդների վերաբերյալ, ուսումնասիրել ներդրված նորարարությունները, որոնք օգնել են ոչ միայն խուսափել կրթության որակի վրա բացասական ազդեցություն-ներից, այլև հնարավորություն են տվել առցանց ուսուցման արդյունքում կուտակել լավ փորձ, որը հնարավոր է զարգացնել և կիրառել ավանդական կրթության պայմաններում:

Խնդիրներն են՝

- ✓ Պարզել հեռավար դասերին ուսանողների ներգրավվածության աստիճանը, ուսումնասիրել մասնակցության բարձրացման և նվազեցման պատճառները,
- ✓ Պարզել հեռավար դասապրոցեսի ազդեցություններն ուսանողների սովորելու մոտիվացիայի վրա, հասկանալ դրական և բացասական փոփոխությունների պատճառները,
- ✓ Ուսանողի տեսանկյունից ներկայացնել հեռավար ուսուցման առավելու-թյուններն ու թերությունները,
- ✓ Ուսումնասիրել առցանց ուսուցման ի՞նչ նոր մոտեցումներ և մեթոդներ են ներդրվել՝ կիրառելով համացանցի հնարավորությունները և օնլայն տիրույթում առկա պաշարները,
- ✓ Պարզել հեռավար դասերը առավելապես տեսական, թե՞ գործնական բնույթի էին,
- ✓ Պարզել առցանց ուսուցման պայմաններում ուսումնական նյութերի մատուց-ման ի՞նչ ձևաչափ է ընտրվել,
- ✓ Կապ հաստատել ուսանողներին տրված հանձնարարականների, առաջադ-րանքների և դրանց ստուգման ու գնահատման մեթոդների միջև,
- ✓ Ուսումնասիրել կիրառվե՞լ է արդյոք հետադարձ կապի մեխանիզմը և հիմնա-կանում գործնական առաջադրանքների շրջանակում ինչ կերպ է հետադարձ կապ ապահովվել:

Հաշվի առնելով այն, որ ուսանողների գիտելիքների և հմտությունների գնահատումը կարող է անդրադառնալ որակի ապահովման բազմադրվագ իրողու-թյունների վրա՝ հարցման խնդիրներից էր նաև ստանալ քննություններն ու գնահատումներն առցանց իրականացնելու վերաբերյալ կողմ և դեմ տեսակետները, հավաքագրել ցանկացած դիրքորոշման հիմնավորումները:

Հավելենք նաև, որ մեկ ամսվա ընթացքում իրականացված հեռավար ուսուցման վերաբերյալ ուսանողական հարցումների շրջանակում դեռ վաղ է որևէ գնահատա-կան տալ, թե բուհը փորձարկումների և նորարարությունների որ փուլում է և ինչ հաջողություններ է արձանագրել: Այս հարցման արդյունքները կօգնեն հասկանալ՝ դասավանդումն ու ուսուցումը առցանց պայմաններում տեղափոխելու գործում, որոնք էին բուհի ուժեղ և թույլ կողմերը, իսկ ուսումնական տարվա ավարտին[2] ուսանողների

[2] Այս ժամանակահատվածն է ընտրվել, որպեսզի գնահատվի ոչ միայն կիսամյակային քննությունները, այլև ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի առցանց պաշտպանության փորձը:

և դասախոսների հետ ՈԱԲ-ի կողմից իրականացվելիք ֆոկուս խմբերը թույլ կտան արտացոլել հեռավար ուսուցման առանձին բաղադրիչների զարգացման հնարավորությունները և արձանագրված թերացումների խորքային պատկերը:

Հեռավար ուսուցման արդյունավետության վերաբերյալ առցանց ուսանողական հարցման արդյունքների վերլուծությունը՝ գծապատկերներով

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. ՆՇԵՔ ՁԵՐ ՖԱԿՈՒԼՏԵՏԸ/ԱՄԲԻՈՆԸ

196 responses/ 196 պատասխան





ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. Ո՞Ր ԿՈՒՐՍՈՒՄ ԵՔ ՍՈՎՈՐՈՒՄ

196 responses/ 196 պատասխան



ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՔ ԱՐԴՅՈՔ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ

196 responses/ 196 պատասխան



Ըստ ուսանողների տված պատասխանների՝ հեռավար ուսուցման անցումով բուհի կրթական պրոցեսին ուսանողների ներգրավվածությունը չի նվազել. դրական իրողություն է, որ հարցվածների 12, 2%-ը ավելի շատ է մասնակցել առցանց դասերին՝ հաշվի առնելով ավանդական ուսուցման պայմաններում ուսանողների բացակայությունների բարձր ցուցանիշները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԻՄ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

196 responses/ 196 պատասխան



Կրթության ոլորտում անգամ սահուն և ճկուն փոփոխությունները կարող են հանգեցնել անցանկալի արդյունքների, իսկ համակարգային և արմատական փոփոխությունները ի հայտ են բերում նոր մարտահրավերներ և խնդիրներ, որոնք տարբեր կերպ կարող են ընկալվել ուսանողների կողմից և բացասաբար անդրադառնալ նրանց սովորելու մոտիվացիայի վրա:
Այս տեսանկյունից կարևոր էր ուսումնասիրել մոտիվացիայի ինչ փոփոխություններ են տեղի ունեցել, և բուհում իրականացվող հեռավար ուսուցման որ ժամանակահատվածում են արձանագրվել դրական կամ բացասական միտումները:
Եվ ինչպես պատասխաններն են ցույց տալիս, հարցմանը մասնակցած ուսանողների 52,6%-ի սովորելու մոտիվացիան չի փոխվել, բավականին դրական արդյունք է, որ գրեթե 30%-ի սովորելու մոտիվացիան աճել է, իսկ գրեթե 18 %-ի սովորելու մոտիվացիան նվազել է:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ԲԱՐՁՐԱՑԵԼ Է

58 responses/ 58 պատասխան



Նշենք, որ հարցմանը մասնակցած 196 ուսանողից 58–ն է պատասխանել այս հարցին և այս համակազմի 60,3%-ը նշել է, որ հեռավար դասերի հենց 1-ին շաբաթվա ընթացքում է աճել առցանց դասապրոցեսին մասնակից լինելու մոտիվացիան: Հարցմանը մասնակցած ուսանողների 32,8%-ի մոտ օնլայն դասերին միանալու մոտիվացիայի աճ է նկատվել հեռավար ուսուցման 2-3-րդ շաբաթվա ընթացքում:
Հաջորդիվ շաբաթների ընթացքում էականորեն չի բարձրացել հեռավար դասերի մասնակցության ուսանողների մոտիվացիան՝ 3-4-րդ շաբաթվա ընթացքում՝ 3,4%-

ով, 5-րդ շաբաթվա ընթացքում՝ 1,7%-ով, իսկ հարցվածների ընդամենը մեկի (1,7%) մոտիվացիան ընդհանրապես չի բարձրացել որևէ շաբաթվա ընթացքում:

ԿԱՐՈՂ Ե՞Ք ՆՇԵԼ՝ ԻՆՉԻ ՇՆՈՐՀԻՎ Է ԲԱՐՁՐԱՑԵԼ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՐ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

44 esponses/ 44 պատասխան

Նախորդ հարցին պատասխանած 58 ուսանողից 44-ն է ներկայացրել՝ ինչի շնորհիվ է բարձրացել առցանց դասերի մասնակցության մոտիվացիան:

Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 1-ում:

Պատասխաններ	f*
Դասախոսների աշխատասիրությունը, ակտիվությունը	4
Դասախոսական անձնակազմի պրոֆեսիոնալ աշխատանքը	1
Դասախոսների հոգատարությունը, վերաբերմունքը	3
Դասախոս-ուսանող հարաբերությունների անմիջականությունը	2
Դասախոսների աջակցությունը	4
Մեր (ուսանողների) պատասխանատվությունը, սովորելու ցանկությունը	3
Դասերի ընթացքում բանավեճերը	1
Դասերի ավելի հետաքրքիր անցնելը	7
Լիարժեք դասանցկացումը	1
Դասավանդման մեթոդների բազմազանությունը	1
Կրթական պրոցեսում նորամուծությունների կիրառում	2
Նորարարական տեխնոլոգիաների օգտագործումը	3
Դասերին մասնակցելու հարմարությունը	9
Ժամանակի և այլ ծախսերի (տրանսպորտ, դրսի սնունդ) խնայողությունը	4

* f-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

Պատասխաններից կարելի է ենթադրել, որ դասավանդողի գործոնը (f=14) մեծ դեր է ունեցել ուսանողների առցանց դասերին մասնակցության մոտիվացիայի բարձրացման գործում: Ամենից հաճախ նշված գործոնները (f=15) դասանցկացումն ու նոր մեթոդներով դասերի կազմակերպումն է: Կանխատեսելի էր նաև դասերի հարմարավետությունը տարբերակը (f=13): Մասնակիցներից մի քանիսը (f=3) նշել են իրենց իսկ սովորելու ցանկությունը՝ որպես մոտիվացիա:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6.

ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՄ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ ՆՎԱԶԵԼ Է

35 responses/ 35 պատասխան



Հարցմանը մասնակցած 196 ուսանողից 35-ը նշել է (17,8 %), որ բուհում իրականացվող հեռավար ուսուցման ընթացքում առցանց դասերի մասնակցության իր մոտիվացիան նվազել է: Նրանցից 31,4 %-ը նշել է, որ հենց առաջին շաբաթվա ընթացքում է նվազել մոտիվացիան: Գրեթե նույնական են բաշխվել հեռավար ուսուցման 2-3-րդ շաբաթվա ընթացքում առցանց դասերի մասնակցության մոտիվացիայի անկում ունեցած ուսանողների տված պատասխանները: Տվյալներից պարզ է դառնում, որ դասերի 3-4-րդ շաբաթվա ընթացքում ուսանողների մասնակցության մոտիվացիան ավելի է նվազել:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 6.1




ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
ՍՄԿ ՖԱԿՈՒԼՏԵՏ
50
40
30
20
10
0
40.3
37.7
43
27.9
29.2
19.7
26.2
23.6
29.1
17.9
27.4
20.1
29.5
16
24.3
16.6
27.4
16
23.1
14.8
23.03-27.03
30.03-03.04
06.04-10.04
13.04-17.04
20.04-23.04
I
II
III
IV


ԿԻՆԵԶԻՈԼՈԳԻԱ
60
50
40
30
20
10
0
54
32.5
52
42.6
26.1
41.2
41.4
27.4
45.5
36.04
25.75
43.01
42.22
28.21
40.33
23.03-27.03
30.03-03.04
06.04-10.04
13.04-17.04
20.04-23.04
I Կուրս
II Կուրս
III Կուրս


ԱԴԱՊՏԻՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ
100
80
60
40
20
0
50
45.7
46.4
58.3
93.9
36.6
50.9
47.2
90
36
46
50
81.6
34
50
0
85
34
44
0
23.03-27.03
30.03-03.04
06.04-10.04
13.04-17.04
20.04-23.04
I
II
III
IV

Առցանց հարցմամբ ստացված տվյալներն ու Ուսումնագիտական վարչության[3] իրականացրած ամենշաբաթյա մշտադիտարկումների արդյունքները ցույց են տալիս, որ առցանց դասերին հաճախումների նվազման միտում նկատվել է հիմնականում 3-րդ շաբաթվա ընթացքում, հաջորդական շաբաթներին որոշ կուրսերում (1-ին և 2-րդ կուրս) հաճախումները կայունացել են, իսկ 4-րդ կուրսերում նվազման միտումը պահպանվել է:

ԿԱՐՈՂ Ե՞Ք ՆՇԵԼ՝ ԻՆՉԻ ՊԱՏՃԱՌՈՎ Է ՆՎԱԶԵԼ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՐ ՄՈՏԻՎԱՑԻԱՆ

30 responses/ 30 պատասխան

«Հեռավար դասերի մասնակցության իմ մոտիվացիան նվազել է» հարցին պատասխանած 35 ուսանողից 26-ն է ներկայացրել հեռավար դասերի մասնակցության մոտիվացիայի անկման պատճառները:
Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 2-ում:

Պատասխաններ	f*
Նոր ուսուցման ձև լինելը	2
Մարդկային շփման բացակայությունը	6
Մասնագիտական առարկաները գործնական անելու անհնարինությունը	1
Դասերի ոչ բավարար արդյունավետությունը	5
Դասերի ավելի անհետաքրքիր լինելը	4
Դասերի գործնական չլինելը	1
Դասավանդման գործընթացի կազմակերպումը	2
Լրացուցիչ դիդակտիկ նյութերի պակասը	1
Էլեկտրոնային դասախոսությունների բացակայությունը (Քանի որ լեկցիաներ չեն տրամադրում և կան դասախոսներ, ովքեր ասում են լեկցիա չունեմ, իսկ ուղեղիցս USB-ով փոխանցել չեմ կարող. իսկ եթե մենք լեկցիա չունենք ո՞նց ենք քննություն հանձնելու)	1
Ծանրաբեռնվածությունը և գերհոգնածությունը	1
Աշխատանքը	1
Տանից մասնակցելը	1
Կապի և տեխնիկական խնդիրները	4

[3] Ամենշաբաթյա մշտադիտարկումների արդյունքները տրամադրվել են Ուսումնագիտական վարչության կողից:

* f-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

Պատասխաններից կարելի է ենթադրել, որ առցանց դասերի ընթացքում մարդկային շփման բացակայությունը (f=6) մեծ դեր է ունեցել ուսանողների առցանց դասերին մասնակցության մոտիվացիայի նվազման հարցում: Ամենից հաճախ նշված գործոնները (f=17) կապված էին դասանցկացման հետ՝ դասավանդման գործընթացի կազմակերպումը, գործնական դասերի և դիդակտիկ նյութերի բացակայությունը, դասերի անարդյունավետությունը և անհետաքրքիր լինելը: Ինչպես նաև նշվել են տեխնիկական և այլ խնդիրները (ժամանակ, աշխատանք) որպես մոտիվացիայի նվազման պատճառ (f=7):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆՇԵԼ ԱՅՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ՈՐՈՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԴԺՎԱՐԱՑԵԼ ԵՔ ԼԻԱՐԺԵՔ ՆԵՐԳՐԱՎՎԵԼ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆԸ



Ինչպես երևում է հարցման արդյունքից, հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը՝ 38,8%-ը հեռավար ուսուցմանը ներգրավվելուն խոչընդոտող պատճառներ չունի, սակայն փոքր չէ այն ուսանողների թիվը (16.8%-ը), ովքեր հեռավար ուսուցման դժվարություններից են համարում համակարգչի առջև չափից շատ ժամանակ անցկացնելը: Առանձնասենյակի կամ մեկուսի տարածքի խնդիր

ունեցող ուսանողները կազմում են հարցված ուսանողների 8,7%-ը, այսինքն՝ նրանք ունեն ուշադրության կենտրոնացման, հարմարավետ աշխատանքային միջավայրի անհրաժեշտություն: Հարցված ուսանողների թվում կան ուսանողներ (4,6%), որոնց գիտելիքներն ու հմտությունները բավարար չեն տեխնիկական միջոցներից օգտվելու համար, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների կարիք ունեցող ուսանողներ, որոնց թիվը տոկոսային հարաբերությամբ կազմում է հարցման մասնակիցների 4,1%-ը: Հարցման մասնակիցները այլ պատճառներ ևս նշել են, ինչպես օրինակ՝ անխափան աշխատող համացանցային կապի բացակայությունը, տեսողության խնդիրը, բնակարանի աղմուկը, ինչպես նաև այն որ, թե՛ իրենք և թե՛ դասախոսները պատրաստ չէին առցանց ուսուցման, նաև մոտիվացիայի պակասը, սակայն այս պատճառները նշվել են 1-3 ուսանողների կողմից:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 8.
ԱՌՑԱՆՑ Ի՞ՆՉ ՀԱՐԹԱԿ ԿԱՄ ՀԱՎԵԼՎԱԾ ԵՔ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

196 responses/ 196 պատասխան



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9.
ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ՝ ՁԵԶ ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՑԵԼ ԵՆ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՀԱՐՄԱՐԵՑՆԵԼ ԱՌՑԱՆՑ ՁԵՎԻՆ՝ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՏՉԵԼԻ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ



Քանի որ առցանց ուսուցումը միայն տեղեկատվական տեխնոլոգիաները չեն, այլև առցանց կրթական գործընթացում ներդրված այն արդյունավետ լուծումները, որոնք կարգավորում են առցանց ուսուցմանը հարմարեցված ուսումնական նյութերի տրամադրման, ինտերակտիվ և համագործակցված ուսուցման մեթոդների կիրառ-ման, առաջադրանքների և դրանց կատարման համար ուսանողներին տրամադրվող ուղղորդումների և աջակցության ապահովման հարցերը:

Այս հարցմամբ ստացված տվյալները ցույց են տալիս, որ հարցմանը մասնակցած 67 % ուսանողների կարծիքով հեռավար ուսուցում իրականացնող դասախոսներին հաջողվել է դասավանդումը հարմարեցնել առցանցին համակարգին:

29 %-ը նշել է, որ դասախոսները կիսով չափ են կարողացել ինտեգրվել առցանց ուսուցման պայմաններին, իսկ 7 ուսանող (3,6%) հարցին տվել է բացասական պատասխան:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10.
ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ Ի՞ՆՉ ՁԵՎԱՉԱՓՈՎ ԵՆ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ

196 responses/ 196 պատասխան



Ինչպես արդյունքներն են ցույց տալիս, ուսանողներին ուսումնական նյութեր առավելապես տրամադրվել են էլեկտրոնային դասախոսությունների եղանակով, օգտագործվել են նաև առցանց գրքեր և տեսադասախոսություններ, անհամեմատ քիչ է ներդրվել էլեկտրոնային թղթապանակների, ուսումնական ներկայացումների/պրեզենտացիաների ձևաչափը, թրեյնինգային համակարգչային ծրագրերի, էլեկտրոնային շտեմարանների հարթակները:

Այս ցուցանիշները համադրելով Գծապատկեր 9-ի պատասխանների հետ կարելի է ենթադրել, որ ուսուցումը առցանց պայմաններին հարմարացնելու վերաբերյալ ուսանողների պատկերացումները ներառում են հիմնականում դասախոսությունների էլեկտրոնային տարբերակի տրամադրումն ու առցանց գրքերի կիրառումը:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11.
ՈՒՍՈՒՑՄԱՆ Ի՞ՆՉ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՆ ԿԻՐԱՌՎՈՒՄ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԵՐԻՆ

196 responses/ 196 պատասխան



Այս հարցմամբ կարևոր էր պարզել, թե ուսուցման ինչ նոր մեթոդներ ու տարբեր մոտեցումներ են կիրառվել՝ որպես լրացում լսարանային դասավանդմանն ու ուսուցմանը: Հաղորդակցման նոր պայմաններում իրականացվող ուսուցումը ենթադրում է որոշակի նոր մեթոդների կիրառում, որը կարող է նպաստել ուսուցման բազմազան և ինտերակտիվ միջավայրի ապահովմանը: Հեռավար ուսուցման համակարգն առանձնանում է ուսումնական նյութը ներկայացնելու ձևով, նոր տիպի ուսուցման միջոցներով, դասավանդողի և ուսանողների, ինչպես նաև ուսանողների՝ միմյանց հետ փոխգործակցության ձևով:

Ստացված տվյալներից կարող ենք եզրակացնել, որ հեռավար դասերին ևս պահպանվել են ինտերակտիվ և համագործակցային ուսուցման տարրերը՝ ինչպես օրինակ առցանց ռեժիմում քննարկումների և բանավեճերի ձևաչափը: Դասախոսների կողմից տրամադրված ուսումնական նյութերը ևս դիտարկվել են քննարկումների ձևաչափով: Դրական իրողություն է, որ հեռավար ուսուցման առաջին իսկ ամսվա ընթացքում ուսանողների համար անցկացվել են օնլայն վարպետաց դասեր տվյալ մասնագիտության ոլորտի փորձառու մասնագետների կողմից՝ որպես կրթական լրացուցիչ ռեսուրս:Մասնագիտական անիմացիոն գրքերն ու ցանցային օլիմպիադաներն ու մրցույթները գրեթե չեն ներդրվել հեռավար

ուսուցման ընթացքում: Իբրև դիտարկում նշենք, որ վերջին երկու այլընտրանքային մեթոդները բավականին մեծ կիրառություն են ստացել սպորտի ոլորտի միջազգային բուհերի հեռավար ուսուցման պրոցեսում, որոնք օգնել են առցանց ուսուցման պայմաններում վերակառուցել մասնագիտական առարկաների պրակտիկ գիտելիքների տրամադրման մոտեցումները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐԻՑ ՈՐՈ՞ՆՔ ԿՆԱԽԸՆՏՐԵԻՔ, ՈՐ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԻՆ ԿԻՐԱՌԵԼ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

88 responses/ 88 պատասխան

Հարցին պատասխանել է 100 ուսանող, որոնցից 12-ը հրաժարվել կամ դժվարացել է պատասխանել:
Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 3-ում:

Պատասխաններ	f*
Բոլորը	2
Էլեկտրոնային նյութերի փոխանցում/տրամադրում	15
Անիմացիոն գրքերի դիտարկում	2
Ուսումնական տեսանյութեր, տեսադասախոսություններ	6
Ուսումնական տեսանյութերի քննարկում	10
Քննարկումներ, բանավեճեր	15
Համագործակցում ուսանողների հետ	1
Լաբորատոր հեռավար պրակտիկումներ	2
Օլիմպիադաներ և մրցույթներ	5
Առցանց ռեժիմով դասեր, վեբինարներ	8
Համատեղել ավանդական և հեռավար ուսուցումը	3
Օնլայն վարպետաց դասերը ոլորտի փորձառու մասնագետների կողմից	3
Էլեկտրոնային փոստի միջոցով հանձնարարությունների ստուգումը	1
Առցանց թեստեր/քվիզ	2
Օգտագործված նյութերի միշտ հասանելի լինելը	1
Շփումը	1
Ոչ մեկը	11

* *f*-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

Ըստ վերը նշված պատասխանների, մասնակիցների մեծամասնությունը (f=15) նախընտրում է էլեկտրոնային դասախոսությունների/նյութերի տրամադրումը կիրառել նաև ավանդական ուսուցման ընթացքում: Առաջարկվել է նաև իրականացնել քննարկումներ, բանավեճեր, տեսանյութերի դիտում (f=31):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12. ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԵՐԸ ԱՎԵԼԻ ՇԱՏ

196 responses/ 196 պատասխան



Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեռավար ուսուցման անցնելու ընթացքում խիստ կարևոր էր ցուցաբերել ճկունություն, քանի որ մի դասընթացի շրջանակում արված վերափոխումները չեն կարող նույնական լինել բոլորի համար, բուհում դասավանդողներին տրվել է ինքնավարություն վերապլանավորելու տեսական և գործնական դասերի կազմակերպումը առցանց ուսուցման համար:
Եվ ինչպես ուսանողներն են նշել իրենց պատասխաններում, հեռավար ուսուցման պայմաններում հավասարապես անցկացվել են տեսական և գործնական բնույթի դասեր. հարցվածներից 8-ը (4,1%) նշել է, որ հեռավար դասերը բացառապես գործնական բնույթի են:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 13. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍԵՐԻՆ ՁԵՋ ՏՐՎՈՒՄ Ե՞Ն ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՈՒ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

196 responses



Ինչպես տեսնում ենք, ուսանողների մեծամասնությունը նշել է, որ գործնական դասերին իրենց տրվել են առաջադրանքներ և հանձնարարականներ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 14. Ի՞ՆՉ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ԵՆ ՏՐՎՈՒՄ

196 responses/ 196 պատասխան



Ըստ հարցման արդյունքների՝ ուսանողներին տրվել են մեծամասամբ ռեֆերատիվ աշխատանքներ (ռեֆերատներ) գրելու հանձնարարականներ, ուսանողներն այս ընթացքում կազմել և անցկացրել են քուիզ-թեստեր, պատրաստել են պրեզենտացիաներ և ռեպորտաժներ (մարզական լրագրողներ):

Ուսանողներից 2%-ը նշել են, որ գործնական աշխատանքներից բոլոր տեսակները հանձնարարվել են, ընդամենը 2%-ն է նշել, որ էսսե գրելու առաջադրանք է տրվել, իսկ 4 %-ն էլ պատասխանել, որ իրենց որևէ առաջադրանք չի տրվել:
Հաշվի առնելով ուսանողների տված պատասխանները կարող ենք ասել, որ հեռավար ուսուցման հանձնարարականներում մեծացել է պրակտիկ բաղադրիչը, ինչպես նաև ընդլայնվել են խառը ուսուցման (blended learning) մեթոդի կիրառման հնարավորությունները:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15.ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՁԵՋ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ Է՞ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

196 responses/196 պատասխան



Ինչպես նշել է ուսանողների մեծամասնությունը (գրեթե 70%) գործնական առաջադրանքների ստուգման և գնահատման ժամանակ դասախոսների կողմից իրենց տրամադրվել է հետադարձ կապ, 22,4 %-ի կարծիքով՝ հետադարձ կապը մասամբ է ապահովվել, իսկ 7,7 %-ը պատասխանել է, որ հետադարձ կապ ընդհանրապես չի տրամադրվել:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16.ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊԸ ԻՆՉՊԵՍ Է՞ ՏՐԱՄԱԴՐՎՈՒՄ



Հեռավար ուսուցման ընթացքում գործնական առաջադրանքների շտկումների և ուղղորդումների վերաբերյալ ուսանողներին հետադարձ կապ տրամադրելու համար դասախոսները նախապատվությունը տվել են անհրաժեշտ ուղղումները դասին բանավոր ներկայացնելու տարբերակին, կիրառվել է նաև գրավոր կերպով հետադարձ կապի տրամադրման եղանակը և ուսանողի էլեկտրոնային փոստին են ուղարկվել դասախոսի մեկնաբանություններն ու շտկումները:

Սակավադեպ են եղել անհատական մոտեցմամբ՝ անհատական տեսահանդիպում-ների, հեռախոսային հաղորդակցումների միջոցով գործնական առաջադրանքների թերությունների վերաբերյալ քննարկումները:

Հավելենք նաև, որ մեծ թիվ չեն կազմում այն ուսանողները, ովքեր նշել են, որ հետադարձ կապը թույլ է կամ դասախոսների կողմից առաջադրանքների շտկումներ չեն արվել և չեն տրամադրվել:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17
ԸՍՏ ՁԵՋ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԽՎԱԾ Է



Հատկանշական է, որ հեռավար ուսուցման արդյունավետության գործոնները գնահատելիս ուսանողները առաջնահերթորեն կարևորում են դասավանդման մեթոդները, այնուհետև՝ դասընթացի բովանդակությունը, հաջորդիվ՝ ուսանողի մոտիվացվածությունն ու տեխնիկական միջոցների հասանելիությունն են նպաստում հեռավար ուսուցման արդյունավետությանը:

Եվ քանի որ հեռավար ուսուցման անցումը առավել հանկարծահաս էր, քան պլանավորված գործընթաց, բուհում իրականացված առցանց ուսուցման արդյունավետության գնահատվել է ոչ թե որպես ինքնուրույն ուսուցման ձև, այլ որպես առկա կրթության անընդհատությունը ապահովող ուսուցման նոր եղանակ:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 18
ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ ԿԱՄ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

186 responses/ 186 պատասխան



Հեռավար դասերի մասնակցության սեփական փորձից ելնելով ուսանողները ներկայացրել են հեռավար ուսուցման առավելությունները, որոնք անուղղակիորեն վեր են հանում բուհում իրականացվող առցանց ուսուցման դրական կողմերը:

Ըստ էության՝ ուսանողների կարծիքով հեռավար ուսուցման առավելություններն են՝

- ✓ Տարածական սահմանափակումները և ժամանակային խոչընդոտները հաղթահարվում են:
- ✓ Ուսումնական գործընթացի ժամանակացույցի և աշխատանքային ճկունության գործոնը, ինչը թույլ է տվել դասերը բաշխել ըստ իրենց համար հարմար ժամանակացույցի, ուսումնառության համար ընտրել և օգտագործել տարբեր տեխնիկական միջոցներ, զննական և ուսուցանող ծրագրեր:
- ✓ Ուսանողները մշտական կապի մեջ են դասախոսների հետ, արդյունքում աճում է սովորողների և դասավանդողների միջև տեղեկատվության փոխանակման օպերատիվությունը: Ուսուցումը դառնում է տեխնոլոգիապես ավելի զարգացած և անհատականացված:
- ✓ Էականորեն մեծանում են դասախոսի հետ անհատական աշխատանքի, տեսանյութերի, էլեկտրոնային գրքերի հետ ինքնուրույն աշխատելու,

վեբինարների մասնակցելու, համակարգչային ցանցերի միջոցով տվյալների բազաներից օգտվելու և այլ հնարավորությունները:

- ✓ Հետագա կյանքի համար անհրաժեշտ կարողությունների ձեռքբերումն ու լրացուցիչ կրթության խթանումը:

Հավելենք նաև, որ ուսանողների մի մասն էլ (16 %) հեռավար ուսուցման որևէ առավելություն և դրական կողմ չի առանձնացրել:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ Ի՞ՆՉԸ ՁԵՔ ԳՈՀԱՑՐԵՑ

89 responses/ 89 պատասխան

96 ուսանող պատասխանել է հարցին, 7-ը հրաժարվել կամ դժվարացել է պատասխանել: Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Պատասխաններ	f*
Ամենին ինչ	2
Դասախոսների ճիշտ մոտեցումը, աշխատասիրությունը	13
Դասախոսների ոգևորությունը, մոտիվացվածությունը	3
Անհատական մոտեցումը	4
Դասախոսի վերաբերմունքը	6
Դասախոսի հետ անմիջականությունը	3
Ոչ պաշտոնական շփումը	1
Շփումը միմյանց (ուսանողների) հետ, համախմբվածությունը	2
Դասերի անընդհատությունը	4
Կազմակերպվածությունը, ուսանողների ներգրավվածությունը	8
Լիարժեք դասանցկացումը, արդյունավետությունը	3
Գիտելիքների ձեռքբերումը	5
Դասավանդման նոր/այլընտրանքային մեթոդները	11
Ինքնակրթություն, ստեղծագործական աշխարհայացքի մեծացում	2
Անկախ տեղից մասնակցելու հնարավորությունը	9
Ժամանակի խնայողությունը, ճկուն գրաֆիկը	12
Ուսումնական գործընթացի ճկուն ժամանակացույցը և լրացուցիչ կրթության խթանումը	1
Ոչինչ	7

* f-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 19.
ՁԵՐ ԿԱՐԾԻՔՈՎ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ և ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

196 responses/ 196 պատասխան



«Որո՞նք են առցանց ուսուցման բացասական կողմերը» հարցին պատասխանելիս ուսանողների որոշ մասը խուսափել է որևէ բացասական կողմ մատնանշել՝ նախընտրելով «Արտակարգ դրության պայմաններում միակ տարբերակն է ուսուցումը չընդհատելու համար» պատասխանի տարբերակը:

Իսկ այն ուսանողները, ովքեր անդրադարձել են հեռավար ուսուցման բացասական կողմերին և թերություններին, առանձնացրել են մասնավորապես՝

- ✓ սովորողների և դասավանդողների միջև անմիջական հաղորդակցության պակասը
- ✓ մեծ կախվածությունը տեղեկատվական տեխնոլոգիաներից
- ✓ գերծանրաբեռնվածությունը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ որոշակիորեն չի վերահաշվարկվել հեռավար ուսուցման պայմաններում ուսանողի ծանրաբեռնվածությունը՝ թե՛ դասերի մասնակցության և թե՛ ինքնուրույն առաջադրանքների կատարման համար պահանջվող ժամանակի կառավարման

տեսանկյունից, որն ուղեկցվում է բացառապես նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

- ✓ դժվար է ստեղծել ստեղծագործական մթնոլորտ սովորողների խմբում,
- ✓ ուսանողների շրջանում ինքնակարգապահության և ինքնակազմակերպման պակասը
- ✓ նվազում է ուսումնական գործընթացի կազմակերպման ձևերի թիվը, չկա կարծիքների բազմազանություն:
- ✓ Հաղորդակցման տեխնոլոգիաները հանգեցնում են սովորողների սոցիալական մեկուսացման

Իսկ հարցվածների 9,7%-ը թերություն չի տեսնում առցանց ուսուցման գործընթացում:

ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՅՍ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎՈՒՄ Ի՞ՆՉ ԼՈՒՐՋ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԴՈՒՔ ԱՌՆՉՎԵՑԻՔ

140 ուսանող պատասխանել է հարցին: 3-ը հրաժարվել կամ դժվարացել են պատասխանել: Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 5-ում:

140 responses/ 140 պատասխան

Պատասխաններ	f*
Տեխնիկական խնդիրներ	28
Քննարկումների, իրական շփման պակաս	6
Անպատասխան հարցեր, տեղեկատվության պակաս	7
Դասը վերածվում է զրույցի	1
Ծրագրերի բացակայությունը	1
Կան առարկաներ որոնք հեռավար կատարելը անհնարին է օր.՝ հրաձգություն, լող, մարմնամարզություն, հանդբոլ և այլն	1
SS ոլորտից անտեղյակությունը (դասախոսների)	3
Տեսողական խնդիրներ, գլխացավ	3
Տեղեկացվածության/իրազեկվածության պակաս	7
Ուսանողական խմբերում ինքնակազմակերպվածության պակաս	1
Առաջադրանքների գնահատման օբյեկտիվությունը . հստակ գնահատման չափանիշների բացակայությունը	1
Դժվարացած ուսուցում, գերբեռնվածություն	8
Դասախոսների հին մեթոդների հեռավարում կիրառում	1

Գործնական դասերի, միջոցառումների բացակայություն Դասերի պլանավորում կինեզիոլոգիայի ամբիոնի կողմից,առանց ուսանողին հարմարվելու	1
Աշխատանքի պատճառով դասերին չմասնակցելը	2
Մեկուսի պայմաններում դասերին միանալ	1
Zoom-ի տրամադրած կարճ ժամանակը Ոչ մի	24

* *f*-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 20.
ԿՈՂՄ Ե՞Ք ՈՐ ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ՍՏՈՒԳԱՐՔՆԵՐՆ ՈՒ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՆԼԱՅՆ ԱՆՑԿԱՑՎԵՆ

196 responses



Ակնհայտ է, որ հեռավար ուսուցման մեթոդների օգտագործման ժամանակ փոխվում են նաև գնահատման մեթոդները: Ինչպես ավանդական, այնպես էլ հեռավար ուսուցման համակարգում գնահատման պահանջների, գիտելիքների, հմտությունների յուրացման վերահսկողության մեթոդների ցանկացած փոփոխություն կարող է անդրադառնալ կրթության որակի ապահովման տարբեր հարցերի վրա, ինչպես օրինակ՝ տվյալ դասընթացի շրջանակում ակնկալվող վերջնարդյունքի ձեռքբերում և ոչ թե դրա վտանգում, անհատական մոտեցման ցուցաբերում ուսանողների գիտելիքների ստուգման հարցում, սովորողների գիտելիքների տարբեր մակարդակների հաշվարկում, գնահատման անաչառություն և օբյեկտիվություն:

Եվ այս առումով կարևոր էր պարզել ուսանողների վերաբերմունքը գնահատումները առցանց ռեժիմով կազմակերպելու հարցի վերաբերյալ:
Եվ ինչպես երևում է, առցանց գնահատումներին կողմ արտահայտված և չկողմ-նորոշված ուսանողների պատասխանները գրեթե հավասարաչափ են բաշխվել, իսկ հարցվածների 29,1%-ը դեմ է օնլայն քննություններին:
Հաջորդիվ ուսանողները փորձել են հիմնավորել իրենց կողմ և դեմ տեսակետները: Դրանք ամփոփ ներկայացնելով կարող ենք ասել, որ կողմ են արտահայտվել նրանք, ովքեր կարծում են՝ ստեղծված իրավիճակում առցանց քննությամբ է միայն հնարավոր գնահատում կատարել, իսկ ովքեր դեմ են, նշել են անվերահսկելիության և օբյեկտիվության հետ կապված խնդիրները:
Այն ուսանողները, ովքեր դժվարացել են պատասխանել հարցին, մատնանշել են առցանց քննությունների ընթացակարգի, ձևաչափային հարցերի վերաբերյալ իրազեկվածության պակասը:

«ԱՅՈ» ԿԱՄ «ՈՉ» ՊԱՏԱՍԽԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

97 responses/97 պատասխան

102 ուսանող պատասխանել է հարցին: 22-ը հրաժարվել կամ դժվարացել է պատասխանել: Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 6-ում:

Պատասխաններ	f*
Տարբերություն չկա	5
Սովորողը սովորելու է, չսովորողը չի սովորելու	1
Արդյունավետ չի առցանց մեթոդը	10
Օնլայն ստուգարքներն ու քննությունները կստեղծի անհարմարություն իմ մասնագիտական առարկայի համար,բոնցքամարտի դա միայն գրքից սովորելու առարկա չէ և անհրաժեշտ են պրակտիկ դասեր:	1
Անվտանգ չէ	1
Այս պահին միակ տարբերակն է առցանցը	20
Այո, որովհետև ուսանողները կկարողանան գնահատվել իրենց օնլայն դասընթացների ընթացքում ստացած գիտելիքներին համապատասխան	1
Ոչ, քանի որ չեմ պատկերացնում, թե ինչպես պետք է դա լինի	1
Օնլայն տարբերակով առաջին անգամ հնարավոր է կաշկանդվածություն լինի	1

Այո, քանի որ օնլայն հարթակում քննությունները անցկացնելը նվազեցնում է համաճարակի տարածման ռիսկերը	2
Այո՛, քանի որ չեմ ուզում որպեսզի հետաձգվի, դա ավելի մեծ լարվածություն է առաջացնում:	1
Բավարար գիտելիքներ չի տրվում քննության համար եւ թող պարզապես նշանակեն առաջին կիսամյակի գնահատականներով	1
Գնահատումը օբյեկտիվ չի կարող լինել	7
Դիպլոմային աշխատանքի օնլայն պաշտպանությունը բարդ է: Կարող են առաջանալ կապի հետ խնդիրներ	1
Ճիշտ եմ համարում առերեսումը	1
Եթե թերի եմ համարում իմ սովորածը ինչպես քննություն հանձնեմ	1
Քննությունը անվերահսկելի է առցանցի դեպքում	9
Սովորող ուսանողները չեն կարողանա մասնակցել քննությանը տեխնիկական ապահովվածություն չունենալու պատճառով	1
Ժամանակի տնտեսում	1
Անկախ տեղից մասնակցելու հնարավորությունը	3
Ավելի հեշտ և ավելի շատ է ժամանակը պատրաստվելու համար	2
Խոսքի ազատ արտահայտման համար	2

* *f*-ը պատասխանների կրկնման հաճախականությունն է:

Ի՞ՆՉ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՔ, ՈՐՈՆՔ ԿՕԳՆԵՆ ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ԱՎԵԼԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ

101 responses/101 պատասխան

120 ուսանող պատասխանել է հարցին, նշենք, որ պատասխանողներից 19-ը հրաժարվել կամ դժվարացել են պատասխանել: Պատասխանների հաճախականությունը ներկայացված է Աղյուսակ 7-ում:

Պատասխաններ	f*
Ամեն ինչ լավ է	1
Մշտական ինտերնետ կապ և անհրաժեշտ տեխնիկա ապահովել	6
Ստեղծել էլեկտրոնային մատյան	1
Ստեղծել հավելվածներ	1
Բոլոր ուսանողների հետ կապ հաստատելն ու օգնել դասերին մասնակցել	4
Ուսանողներին ժամանակին ապահովել անհրաժեշտ տեղեկություններով գործընթացի վերաբերյալ	3
Պրոֆեսիոնալ կերպով կատարել կրթական պրոցեսի կազմակերպչական և տեխնիկական աշխատանքները	1
Համալսարանում շարունակել դասընթացները	7
Օգտագործել տարբեր մեթոդներ, որ կավելացնեն ուսանողների գիտելիքներն ու կզարգացնեն մասնագիտական ունակությունները	3
Ավելի շատ քննարկումներ անցկացնել	1
Գործնական աշխատանքներ	1
Վարպետաց դասերի հաճախակի անցկացումը	1
Շարունակել նոր մեթոդները կիրառել հետագայում	3
Ուսանողների հարցումներին ժամանակին արձագանքել	1
Վերանայել ուսանողի բեռնվածության չափը օնլայն դասերի համար	1
Զարգացնել տեղեկատվական համակարգը	1
Դասաժամը երկարացնել	5
Դասի ժամանակի ճիշտ կազմակերպում	3
Ավելի քիչ ժամանակով անցկացնել դասերը	2

Զարգացնել այս ընթացքում կիրառված ուսումնական մեթոդները	3
Դասախոսները լիարժեք օգտագործեն հարթակների ֆունկցիաները	2
Ստեղծել փակ օնլայն հարթակ որտեղ կլինեն մեր համակուրսեցիները և որտեղ հնարավոր կլինի կիսվել դասընթացների հետ կապված տեղեկություններով և նյութերով	1
Զարգացնել դասախոսների և ուսանողների թվային գիտելիքները	2
Այս իրավիճակից հետո 1-2 ամիս ավելի շատ ներկա գտնվել դասերին և գիտելիքներ ստանալ ու կարողանալ հանձնել քննությունները	1
Ազատ օրերին հեռավար կապ հաստատել դեկանի և ռեկտորի հետ	1
Վերանայել ուսուցման ծրագրերը և հարմարացնել հեռավար դասապրոցեսին	2
Բոլոր դասախոսները անեն դասերը Zoom ծրագրով	1
Շարունակել կիրառել համագործակցային ուսուցման ձևերը	1
Նյութերի՝ կոնսպեկտած ձևով տրամադրումը	2
Դասախոսությունները լինեն ավելի սեղմ, հետաքրքիր մոտիվացնող մեթոդների կիրառում	2
Թե հեռավար և թե ոչ հեռավար պայմաններում ուսանողներին տրամադրել ուսուցման համար կարևոր տեղեկատվական պաշարներ և աղբյուրներ	1
Ավելի շատ ժամանակ հատկացնել և ավելի քիչ քանակությամբ մասնակիցներ, որպեսզի բոլորին հասանելի լինի:	1
Մրցույթային և ինտելեկտուալ խաղերի միջոցով անցկացնել տվյալ առարկան, քննարկում՝ քննական առարկայի շուրջ և վիդիոդասեր գործնական դասերում,որոնք կօգնեն նաև դասախոսներին գնահատել ուսանողին	1
Դասախոսներ կան, ովքեր ուղղակի դասախոսություն են կարդում, մի տոնայնությամբ, որից ոչինչ չես հասկանում և չես ընկալում, խնդրում եմ, որ լինեն «Դադարներ» դրանց ընթացքում լինեն քննարկումներ ուսանողների հետ ինչո՞ւ չէ բանավեճեր... Ուսանողը մասնակցի դասին հաճույքով, ստիպված չլինի անջատել ձայնը, ուղղակի մնալ օնլայն բացակա չստանալու համար	2
Օգտվել ավելի շատ օնլայն գրադարաններից	1
Հեռակա սովորողները թող դասի գնան 2 ամիս ուշ, բայց նորմալ ձևով	1
Ոչ մի	30

* f-ը պատասխանների կրկնման հաճախականությունն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով ՀՖԿՍՊԻ-ում իրականացվող հեռավար ուսուցման արդյունավետության և որակի ապահովման խնդիրների վերաբերյալ ուսանողական առցանց հարցումների վերլուծությունը՝ նախ ընդգծենք այն հանգամանքը, որ առցանց ուսուցումը փորձություն ու փորձարկում էր ինչպես բուհերի, դասախոսների, այնպես էլ ուսանողների համար: Սա մարտահրավեր էր՝ բուհական կրթության զարգացման մեծ ներուժով՝ այն տեսանկյունից, որ թե՛ դասախոսները և թե՛ ուսանողները արագորեն բարելավեցին թվային գրագիտության իրենց մակարդակը:
Առցանց հարցումների արդյունքների հավաքագրումը հնարավորություն տվեց գույքագրել հեռավար ուսուցման խնդիրներն ու բացերը, ինչպես նաև վեր հանել դրական փորձը, ձեռքբերումներն ու զարգացման ներուժը, որոնք կարող են իրացվել նաև ավանդական ուսուցման պայմաններում:
Եվ այսպիսով՝ ներկայացնենք **խնդիրներն ու թերացումները.**
Համավարակն ու ճգնաժամը ցույց տվեցին, որ անկախ տարիքից, դասավանդվող առարկայի բովանդակությունից, կրթական պրոցեսում նոր տեխնոլոգիաների կիրառման հարցում հակադիր կարծիքներ ունենալուց կրթական գործընթացի մասնակիցները ստիպված էին նոր գիտելիքներ և հմտություններ յուրացնել: Այս իրավիճակում հեռավար ուսուցման անցումը առավել տեսանելի դարձրեց ուսուցման ոլորտում ճկունության, ռիսկերի կառավարման հետ կապված խնդիրները դժվարությունները:
Ինչպես հարցումների արդյունքներն են ցույց տալիս, որքան էլ ուսանողներն ու դասախոսական կազմը մեծ պատրաստակամություն և պատասխանատվություն են ցուցաբերել հեռավար ուսուցումը արդյունավետ կազմակերպելու համար, այդ արդյունավետությունը բազմակողմանիորեն ապահովելու համար երկու կողմերն էլ ունենում են աջակցության կարիք:
Թե՛ առկա և թե հեռավար կրթության որակի ապահովման չափանիշները ամրագրում են՝ բուհերը պետք է ունենան ուսանողների, դասախոսական կազմի աջակցության ծառայություններ:
Իբրև դիտարկում նշենք, որ արտակարգ դրության պայմաններում հեռավար ուսուցման անցնելու առաջին իսկ օրերին ՀՖԿՍՊԻ-ի Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժինը դասախոսների համար անցկացրեց տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացման արագընթաց դասեր, որոնք կարևոր էին հատկապես նրանց համար, ովքեր թվային տեխնոլոգիաներից օգտվելուն բոլորովին պատրաստ չէին:
Ինչպես ուսանողներն են նշել իրենց դիտարկումներում, նկատելի է դասավանդողների կողմից տեղեկատվական հարթակների տարրական գիտելիքների տիրապետման պակասը, ինչը նվազեցնում է ուսուցման ինտերակտիվությունը, գիտելիքի փոխանցումն ու սպառումը վերածում միակողմանի

պրոցեսի: Այս իրավիճակը ցույց տվեց նաև, որ հաճախ ուսանողները ավելի հմուտ են տեխնոլոգիաներից օգտվելու հարցում:

Հեռավար ուսուցումը միայն տեսազանգը չէ, այլ առցանց հարթակների բազմազան ուսումնական գործիքները, տեղեկատվական բազաներն ու շտեմարանները, ծրագրային ինտերֆեյսերը, որոնք ապահովում են տարբեր կրթական մակարդակի, տարբեր ֆիզիկական հնարավորություններով մարդկանց սովորելու և աշխատանք կատարելու հնարավորությունը:

Թվային տեխնոլոգիաների և հեռավար դասերի հետ համատեղ առաջ է գալիս կիբերանվտանգության՝ համացանցից անվտանգ օգտվելու խնդիրը

Սա խնդիր է, որն առանձին կրթություն և տեղեկացվածություն է պահանջում, որը հնարավոր է ապահովել բուհի ֆեյսբուքյան էջում տարածելով ցանցային անվտանգությանը վերաբերող խորհուրդներ կամ կարճ տեսանյութեր: Կարելի է նաև ՀՖԿՍՊԻ պաշտոնական կայքում ստեղծել հեռավար ուսուցմանը վերաբերող կրթական գործընթացի բոլոր շահակիցներին՝ ուսանողներին, դասախոսներին ուղղորդող հաճախակի տրվող հարցերի առանձին բաժին, ներկայացնել խորհուրդներ, ուղեցույցներ առցանց ուսուցման վերաբերյալ, որտեղ նշված կլինեն ուսանողի պարտականությունները, կնկարագրվեն ուսանողի գիտելիքի ստուգման ու գնահատման ձևերն ու չափանիշները:

Անկախ թվային գրագիտության մակարդակից՝ հեռավար և ավանդական կրթության մեթոդները համադրելու և նոր կրթական միջավայրի որակն ապահովելու համար է հնարավոր է՝ ուսանողներն ավելի քան երբևէ SS համակարգերից օգտվելու աջակցության կարիք ունենան:

Այս կարճ ժամանակահատվածում դասախոսների տիրապետած տեխնոլոգիական հմտություններն ամրապնդման ու զարգացման կարիք ունեն՝ մասնագիտական վերապատրաստումներով, տեխնիկական, մանկավարժական մեթոդական աջակցությամբ:

Դասավանդման և ուսումնառության ավանդական և հնացած մեթոդները պահպանվել են նաև առցանց դասերին

Ուսումնառության ավանդական մեթոդները պահպանվել են գործնական առաջադրանքներում ևս. ինչպես հարցման արդյունքներն են ցույց տալիս, դասախոսների կողմից շարունակվել է ռեֆերատների հանձնարարումը: Ուսուցման արդյունավետության ապահովման նպատակով արված վերապլանավորումների թույլ մեխանիզմը նկատելի է նաև գնահատումների հարցում. ուսանողներից շատերը անտեղյակություն են ցուցաբերել առցանց քննությունների և գնահատումների վերաբերյալ:

Անհրաժեշտ է ստեղծել ուսանողների գիտելիքների ստուգման ավելի բազմազան և ճկուն համակարգ, որտեղ ուսանողն ավելի քիչ շահադրդված կլինի արտագրել և փոխարենը կկատարի ինքնուրույն և հետազոտական աշխատանք:

Ավանդական ուսուցման փոխարինումը հեռավարով ճկունություն է պահանջում

Նոր կրթական միջավայրում ուսումնառության արդյունքների պլանավորման ճկունության խնդիրը, որի հետևանքով ուսանողները ունեցել են գերծանրաբեռնվածության, «վիրտուալ լսարանի» պայմաններին հարմարվելու բարդությունները նկատելի են հարցման արդյունքներում:

Հեռավար ուսուցումը կանոնակարգված ձևով անցկացնելու, ուսանողների մոտիվացիան բարձրացնելու, դասախոսների և ուսանողների գերծանրաբեռնվածությունը հաշվի առնելով՝ առաջնային լուծման անհրաժեշտություն ունի հեռավար դասերի ճկուն գրաֆիկի սահմանումը՝ պահպանելով ուսանողի շաբաթական ծանրաբեռնվածությունը /առավելագույնը՝ 45ժամ/:

Կա նաև իրազեկվածության պակասի խնդիր, որը վերաբերում է ինչպես ողջ ուսուցման գործընթացին՝ հստակ մշակված ժամանակացույցով, առցանց գնահատման համակարգով, այնպես էլ կառավարության ուսվարձի փոխհատուցման կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 14-րդ միջոցառումից օգտվելու համար անհրաժեշտ ՄՈԳ-ի և այլ փաստաթղթային պահանջների մասին տեղեկատվության մատչելիության ապահովմանը:

Հեռավար կրթության որակի ապահովման ուղենիշների մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բուհական հեռավար ուսուցման զարգացումը փոխում է կրթական գործընթացի մեթոդներն ու միջոցները, նպաստում կրթական գործընթացի ինտենսիվացմանը, բարելավում տեղեկատվական ռեսուրսով ապահովումը, ինչը սովորողների ուսուցման որակապես նոր մակարդակի անցնելու նախադրյալ է:[4]

Հեռավար ուսուցման դրական փորձը

Շեշտենք, որ այս իրավիճակը ՀՖԿՍՊԻ-ի համար մարտահրավեր լինելուց բացի, առցանց ուսուցում իրականացնելու հսկայական փորձի ձեռքբերման հնարավորություն է, որը հետագայում մասնագիտական կրթության համակարգի զարգացման ռազմավարական ուղիներից մեկը կարող է դառնալ:

- ✓ Ավելացել է դասերին ներգրավվածության ցուցանիշը:
- ✓ Չկան տարածական և ժամանակային խոչընդոտները: Ուսանողների կարծիքով՝ սա լավ հնարավորություն էր ինքնուրույն սովորող ուսանողների համար, ովքեր առկա պայմաններում դժվարանում էին կրթությունը համատեղել աշխատանքի հետ:
- ✓ Ուսանող-դասախոս համագործակցությունը դարձել է ավելի անհատականացված, ուժեղացել է հանձնարարականների համար տրամադրվող հետադարձ կապը, ուսանողներին տրվող ուղղորդումների և ուսանողների միջև փոխաջակցության աշխատաձև է ձևավորվում:

[4] «European Distance Learning Guidelines. European Quality Link (EQUAL)» (http://ibr-network.com/netcat_files/11_64.pdf)

- ✓ Թեև ոչ մեծ չափով, սակայն փոխվել է հանձնարարականների բնույթը՝ դառնալով ավելի հետազոտական, հիմնախնդիրակենտրոն (problem oriented) և տեխնոլոգիապես ավելի զարգացած:
- ✓ Տեսական գիտելիքների ուղղորդումը դեպի գործնականը և սովորողի ինքնուրույն աշխատանքի դերի բարձրացում:

Ուսանողական առցանց հարցումը հնարավորություն է տվել ուսանողների տեսանկյունից գնահատել հեռավար ուսուցման կարճ ժամանակահատվածում արձանագրված դրական արդյունքները, դասավանդման պրոցեսում կիրառված նորամուծություններն ու այլընտրանքային մեթոդները, որոնք օգնել են սովորելու բարձր մոտիվացիա ունեցող ուսանողներին ավելի արդյունավետորեն ներգրավվել ուսումնական գործընթացում, իսկ դասախոսներին՝ լինել ուսանողակենտրոն՝ ուշադրության կենտրոնում պահելով ուսանողների կրթական կարիքները:

Նոր հնարավորություններ են ստեղծվել հեռավար ուսուցման գործիքակազմը փորձարկելու և արդյունավետ կերպով կիրառելու համար, օգտագործվել են խառը ուսուցման կամ շրջված (flipped classroom) դասարանի մեթոդները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ուսումնասիրելով հեռավար ուսուցման դրական փորձն ու առաջացած խոչընդոտներն ու թերացումները՝ կարծում ենք անկախ համաճարակային իրավիճակից առցանց ուսուցման օգտակար կոնկրետ բաղադրիչներ ու մոդելներ կրթության առկա պայմաններում ներդրվելու մեծ ներուժ ունեն և այդ հարցին պետք է կրթական ծառայությունների զարգացման ռազմավարական դիտանկյունից նայել: Սա կարող է լայնամասշտաբ ընդգրկում ունենալ՝ ուսումնական գործընթացի որակի ապահովման պատասխանատուներից պահանջելով հեռավար ուսուցման արդյունա-վետության ինքնավերլուծություն կատարել, գնահատել ինչն էր արդյունավետ կերպով արվում, ինչ բացեր ու թերացումներ եղան:

➢ **Կատարել հեռավար ուսուցման արդյունավետության ինքնավերլուծություններ:**

Կարևոր է, որ դասախոսները սեփական աշխատանքի ինքնավերլուծություն կատարեն, հրապարակեն իրենց փորձը, ուսանողներին մոտիվացնելու իրենց կիրառած նորարարություններով, ինչը կօգնի բուհին ավելի կառավարելի դարձնել ներքին և արտաքին ռիսկերը և հետևողականորեն արձագանքել դրանց ու լուծումներ գտնել:

➢ **Ընդլայնել, շարունակաբար զարգացնել հեռավար ուսուցման նոր տեխնոլոգիաների, մուլթիմեդիայի գործիքները, որոնք կարող են կիրառվել նաև ավանդական ուսուցման պայմաններում:**

Հարկ է նշել, որ ուսանողները գոհունակությամբ էին արձագանքել իրենց մասնագիտության ոլորտի փորձառու և կայացած մասնագետների հետ

տեսահանդիպումների, վեբինարների, օնլայն ռեժիմով բանավեճերին, որոնք ամբիոնները բավականին ակտիվորեն նախաձեռնում էին հեռավար ուսուցման անցնող շաբաթների ընթացքում: Հաղորդակցման նոր պայմաններում աշխատելու ընթացքում կուտակած փորձը նախապայմաններ է ստեղծել հեռակոնֆերանսի և տեսակոնֆերանսի ուսուցողական հնարավորությունները ընդլայնելու համար՝ միևնույն ժամանակ պահպանելով լսարանային ուսուցման առավելությունները:

Ուսուցման խառը մոդելը որդեգրած միջազգային բուհերի հաջողված փորձը ցույց է տալիս՝ օգտվելով հեռակոնֆերանսի և տեսանկոնֆերանսի ակտիվ գործիքակազմից կրթական գործընթացը վերակառուցվում է ինտերակտիվ ուսուցումից դեպի պրոակտիվ ուսուցում:

Սա նշանակում է մուլթիմեդիա գործիքները թույլ են տալիս ուսուցումը կազմակերպել ոչ միայն դասախոսից-ուսանող, այլև ուսանողից-ուսանող մեխանիզմով, որտեղ դասավանդողը ավելի շատ ուղղորդող է (ֆասիլիտատոր), քան միայն գիտելիք փոխանցող:

Հեռակոնֆերանսով անցկացվող մասնագիտական ֆորումները, միջբուհական տեսակապերը, քննարկումներն ու կարծիքների փոխանակումը կարող են օժանդակել նաև ուսանողների անընդհատ ուսուցման և դասախոսների շարունակական վերապատրաստման ռազմավարական ուղեգծի ձևավորմանը:

➢ ***Վերանայել, զարգացնել դասավանդման և ուսուցման այլընտրանքային մեթոդներն ու միջոցները.***

Հարցման արդյունքներից ակնհայտ է նաև այն, որ հեռավար ուսուցման ընթացքում կիրառված մեթոդները նպաստել են առցանց դասերին մասնակցելու մոտիվացիայի բարձրացմանը: Սա լավ ցուցանիշ է, սակայն կարիք ունի բարելավման և զարգացման, քանի որ հաջորդական շաբաթներին մասնակցության նվազման տեմպեր են գրանցվել:

Այս ամենից զատ տեղեկատվության աճող ծավալը պահանջում է այն ներկայացնելու բոլորովին նոր ձևեր և յուրացման նոր տեխնոլոգիաներ: Եվ ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով դասավանդողներին առաջարկվում է ուսումնասիրել ուսուցման համաժամանակյա և տարժամանակյա (սինխրոն և ասինխրոն) մեթոդներն ու տեխնոլոգիաները, որոնք հավասարապես կիրառելի են առցանց և լսարանային ուսուցման պայմաններում:

- Streaming media տեխնոլոգիա՝ ուսումնական տեսաֆիլմեր, ուղիղ հեռարձակումներ մասնագիտական պրակտիկաների ժամանակ՝ մեկնաբանությունների և հաղորդակցումների հարթակում հարցուպատասխանի ձևաչափով:
- Էլեկտրոնային և անիմացիոն գրքեր, որոնք կարող են կիրառվել, օրինակ, սպորտի պատմությունը ներկայացնելու, տարբեր հիմնախնդիրներին նվիրված տեսությունների համադրություններն ու հակադրությունները ներկայացնելու համար:

- ***Քեյսային տեխնոլոգիա***՝ ինքնուրույն ուսուցման ձև է, որը նպատակահարմար է կոնկրետ իրավիճակների, խնդիրների, հակասությունների ուսումնասիրման համար՝ կիրառելով տվյալների առցանց շտեմարաններն ու նախագծային աշխատանքներ կատարելու տեխնոլոգիական հնարավորությունները (մասնագիտական համակարգչային ծրագրեր՝ ինչպես օրինակ՝ Amadeus, Sabre, Router OS սպորտային տուրիզմի ոլորտի մասնագետների համար և այլն):
- Ուսանողների և դասախոսների համատեղ պորտֆոլիո կամ հավաքապանակ (portfolio), որը ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի միջոց և առաջադրանքների վրա հիմնված ուսուցման արդյունքներով երևում է ուսանողի մասնագիտական աճը: Պորտֆոլիոն կիսամյակի ավարտին արտացոլում է դասախոսի և ուսանողների գործունեությունը, առանձնացնում խնդիրները, նշվում դրանք ինչպես են լուծվել կամ ինչ դժվարությունների են հանդիպել խնդիրների հաղթահարման ժամանակ: Դասընթացի պորտֆոլիները ընդհանրացնում են արդյունավետ մեթոդների կիրառման լավագույն փորձը, հաջողությունների ու անհաջողությունների վերլուծության շնորհիվ կատարվում է հետագա գործունեության նորովի պլանավորում:

➢ **Վերապլանավորել ուսանողների գիտելիքների ստուգումն ու գնահատումը.**

Քանի որ հեռավար ուսուցման մեթոդների օգտագործման ժամանակ փոխվում են նաև վերահսկողության մեթոդները, հարկավոր է վերակառուցել ուսանողների գիտելիքների ստուգումների և գնահատումների մեխանիզմներն ու ձևաչափերը՝ հաշվի առնելով աշխատանքի կատարման արագությունը կամ վերջնաժամկետների պահպանումը, տարբերակել աշխատանքի բարդության աստիճանը, կիրառել աշխատանքի արդյունքների ստուգման համակարգչայնացված գործիքներ: Հեռավար ուսուցման պայմաններում ևս գնահատման մեթոդները պետք է փոխկապակցված լինեն դասավանդման և ուսումնառության մեթոդների հետ:

Կարևոր է, որ իրականացված վերապլանավորումների մասին ուսանողները իրազեկվեն ժամանակին: Իսկ ծրագիրը հարկ է վերապլանավորել այնպես, որ արտակարգ դրության իրավիճակի կայունացումից հետո ուսանողները հնարավորություն ունենան ձեռք բերել սահմանված պրակտիկ հմտությունները հարակից առարկաների կամ ուսումնական այլ գործունեության միջոցով:

Ստեղծված իրավիճակի հետևանքով առաջացած ռիսկերը կառավարելու համար անհրաժեշտ կլինի իրականացնել ուսանողների և դասախոսների ծանրաբեռնվածության գնահատում՝ հետագայում լրացուցիչ դասընթացներով լրացնելու դասավանդման, ուսումնառության և գնահատման հնարավոր բացերը:

Հարկավոր է նաև մոնիտորինգի մեխանիզմներ մշակել, որպեսզի հետագայում հնարավոր լինի պարզել, թե հեռավար ուսուցման պրոցեսում ներգրավված

ուսանողները արդյոք վերադարձան լսարանային դասերին, նրանց որ մասը վերադարձավ, որը՝ ոչ և որոնք էին յուրաքանչյուր իրավիճակի պատճառները:

- Անցկացնել ուսանողական առցանց հարցումներ՝ գնահատելու ՀՖԿՍՊԻ-ում 2019-20 ուստարվա 2-րդ կիսամյակում դասավանդվող դասընթացների որակը՝ հեռավար ուսուցման արդյունավետության մասին առավել օբյեկտիվ պատկեր ստանալու նպատակով: